ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան **22 հունիսի 2020թ.**

Ժամը 12:00

Հանձնաժողովի նախագահ՝
Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ՝ Նարեկ Հայրապետյան

Անդամներ՝

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (ԳՊ/ԳԱ), Էմմա Բասենցյան

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության իրավական աջակցության բաժնի պետ (ԳՊ/ԳԱ) Արթուր Մելքոնյան

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության իրավական աջակցության բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ) Լիլիթ Ազատյան

սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ), Աղավնի Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Ա. Պետրոսյան

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների ընդհանուր նախահաշվային գները՝ մեկ թվով արտահայտված.

1. **Բազկաթոռ ղեկավարի – 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,**
2. **Աթոռ մետաղյա – 285000 (երկու հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ,**

«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
2. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխան կազմած լինելու մասին:
3. Տվյալներ«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտեր ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

4. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

5. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի վարման վայրի, օրվա և ժամի որոշման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

1. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:

1.1 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են 2020 թվականի հունիսի 19-ին ժամը 11:00-ին:

1.2 Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտերը, որոնք ընդունվել են Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

1.3 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով ԳՀ մրցույթի շրջանակներում հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N/N	Մասնակցի անվանումը	Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոս
1	«Մեգաօֆիս» ՍՊԸ	tender@megaoffice.am /010/ 732161, /091/ 300533
2	«Արգավանդ կահույք» ՍՊԸ	armeps@inbox.ru /091/ 211111

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:

2. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխան կազմած լինելու մասին:

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ.

- «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի և «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հավելված N 1.1-ում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը լրացված է թերի:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» մասին թիվ 526-Ն որոշման 41-րդ կետը և «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերի Մաս 1-ի 8.9 կետը՝ նիստը կասեցվել է և հայտերի բացման օրը սույն ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակիցներին է ուղարկվել՝ անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը: Մասնակիցները սահմանված ժակետում ուղարկել են փաստաթղթերի շտկված տարբերակները, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:

3. Տվյալներ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտեր ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանում	Գնման առարկայի նախահաշվային գինը	Չափաբաժին 1: Բազկաթոռ ղեկավարի		
			Մասնակցի ներկայացրած գինն առանց ԱԱՀ /ինքնարժեք և շահույթ/	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«Արգավանդ կահույք» ՍՊԸ	250000	158250	31650	189900
N	Մասնակցի անվանում	Գնման առարկայի նախահաշվային գինը	Չափաբաժին 2: Աթոռ մետաղյա		
1	«Մեգաօֆիս» ՍՊԸ	285000	362500	72500	435000
2	«Արգավանդ կահույք» ՍՊԸ		375000	75000	450000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կարգը հաստատելու մասին» թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը և սույն ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի Մաս 1-ի 8.7 կետը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նիստը կասեցվեց՝ գների նվազեցման շուրջ վարվող բանակցությունների նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:

4. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

4.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ստացվել:

4.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

5. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի վարման վայրի, օրվա և ժամի որոշման մասին:

5.1 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատման նիստը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կարգը հաստատելու մասին» թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը և սույն ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի Մաս 1-ի 8.7 կետը **1-ին չափաբաժնի մասով՝ «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ին և «Մեգաօֆիս» ՍՊԸ-ին** հրավիրել գների նվազեցման շուրջ վարվող միաժամանակյա բանակցությունների: Հաշվի առնելով ՀՀ-ում գործող ֆորս-

մաժորային իրադրությունը վերանայված գնային առաջարկը անհրաժեշտ է մինչև սույն թվականի հունիսի 24-ը, ժամը 13:00-ը ուղարկել էլեկտրոնային տարբերակով՝ հրավերում նշված էլ. փոստի հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Ն. Հայրապետյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Է. Բասենցյան	ԳՊ/ԳԱ	
	Ա. Մելքոնյան	ԳՊ/ԳԱ	
	Լ. Ազատյան	ԳՊ/ԲԱ	
	Ա. Սարգսյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Ա. Պետրոսյան	ԳՊ/ՄՀմ	

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան **24 հունիսի 2020թ.**

Ժամը 14:00

Հանձնաժողովի նախագահ՝
Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ՝ Նարեկ Հայրապետյան

Անդամներ՝

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (ԳՊ/ԳԱ), Էմմա Բասենցյան

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության իրավական աջակցության բաժնի պետ (ԳՊ/ԳԱ) Արթուր Մելքոնյան

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության իրավական աջակցության բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ) Լիլիթ Ազատյան

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ), Աղավնի Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Ա. Պետրոսյան

«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի օրակարգը

1. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի բանակցությունների արդյունքների ամփոփման մասին:
2. Տվյալներ՝ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման վերաբերյալ:
3. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

1. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի բանակացությունների արդյունքների ամփոփման մասին:

1.1 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին և 2-րդ չափաբաժինների** մասով գների նվազեցման շուրջ վարվող բանակցությունների հրավիրված մասնակիցները չէին ներկայացել, ինչի արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց իրենց կողմից ներկայացված գնային առաջարկը թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Տվյալներ՝ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման վերաբերյալ:

2.1 Սույն ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի պահանջները՝ բավարար գնահատեց «Արգավանդ կահույքի» ՍՊԸ-ի և «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, որի արդյունքները հանձնաժողովի անդամները արտացոլեցին նախապես տրամադրված գնահատման թերթիկներում:
2.2 Հանձնաժողովը որոշեց ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել հետևյալ հերթականությամբ.

Հ/Բ	Ապրանքի անվանում	Մասնակիցների զբաղեցրած տեղը	Մասնակիցների անվանումը
1	Բազկաթոռ ղեկավարի	1	«Արգավանդ կահույք» ՍՊԸ

2.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը հանձնաժողովը որոշեց 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

3.1 «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման և 2-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստերը:
3.2 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:
3.3 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին ծանուցել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման ապահովումը (կնքվող պայմանագրի գնի չափով) և պայմանագրի ապահովումը (կնքվելիք պայմանագրի ընդհանուր

արժեքի 10 (տասը) տոկոսի չափով)՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Ն. Հայրապետյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Է. Բասենցյան	ԳՊ/ԳԱ	
	Ա. Մելքոնյան	ԳՊ/ԳԱ	
	Լ. Ազատյան	ԳՊ/ԲԱ	
	Ա. Սարգսյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Ա. Պետրոսյան	ԳՊ/ՄՀմ	